ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/26-3

ք. Երևան «10» հուլիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման **վրա**՝ այսուհետև «Գնորդ», **մի կողմից** և **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Մեժլումյանի,** ով գործում է **ընկերության** կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն **պայմանագիրը** հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ **Տեխնիկական** բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***14,355,120 (չորսնչորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Ամերիա բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 1570001092880100**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 00801026**
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	**տնօրեն**
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	**Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ**

Հ.Կ. Մուրադյան

AH 0206259

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/26-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՁԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	Ընդհանուր սպիտակուց 4x100մլ	մեկ տուփում 400մլ ազդանյութ, 4x100 գործարանային փաթեթավորումով	TOTAL PROTEIN	PZ Cormay S.A.	Լեհաստան
2.	Միզանյութ 2X120 մլ	մեկ տուփում 240մլ ազդանյութ, 2x120 գործարանային փաթեթավորումով	UREA (GLDH, UV, Kinetic)	PZ Cormay S.A.	Լեհաստան
3.	Միզաթթու 2x100 մլ	մեկ տուփում 200մլ ազդանյութ, 2x100 գործարանային փաթեթավորումով	URIC ACID	PZ Cormay S.A.	Լեհաստան
4.	Կրեատինին 2X120 մլ	մեկ տուփում 240մլ ազդանյութ, 2x120 գործարանային փաթեթավորումով	CREATININE	PZ Cormay S.A.	Լեհաստան
5.	Տրանսամինազա AUS 2X60 մլ	մեկ տուփում 120մլ ազդանյութ, 2x60 գործարանային փաթեթավորումով	ASAT/GOT (IFCC)	PZ Cormay S.A.	Լեհաստան
6.	Տրանսամինազա ALS 2X60 մլ	մեկ տուփում 120մլ ազդանյութ, 2x60 գործարանային փաթեթավորումով	ALAT/GPT (IFCC)	PZ Cormay S.A.	Լեհաստան
7.	Հիմնային ֆոսֆատազա 2X60 մլ	մեկ տուփում 120մլ ազդանյութ, 2x60 գործարանային փաթեթավորումով	ALKALINE PHOSPHATASE (IFCC)	PZ Cormay S.A.	Լեհաստան
8.	Լակտատ դեհիդրոգենազա 2x60մլ	մեկ տուփում 120մլ ազդանյութ, 2x60 գործարանային փաթեթավորումով	LDH	PZ Cormay S.A.	Լեհաստան
9.	Կրեատին ֆոսֆոկինազա 2X60 մլ	մեկ տուփում 120մլ ազդանյութ, 2x60 գործարանային փաթեթավորումով	CK-NAC	PZ Cormay S.A.	Լեհաստան
10.	Ֆոսֆոր 2X100 մլ	մեկ տուփում 200մլ ազդանյութ, 2x100 գործարանային փաթեթավորումով	PHOSPHORUS	PZ Cormay S.A.	Լեհաստան
11.	Սիֆիլիս RPR 100 թեսթ	հավաքածուն պարունակում է 100 թեսթ, ագլյուտինացիան ոչ ավել քան 8 րոպե, գործարանային փաթեթավորումով	RPR REAGENT SET	Lab-Care Diagnostics Ltd	Հնդկաստան
12.	Սիֆիլիս TPHA 100թեսթ	հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով	ДС-РПГА-АНТИ-ЛЮИС	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
13.	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու հեպատիտ B-ի հայտնաբերման համար	Նախատեսված է ամբողջական արյան մեջ հեպատիտ B-ի վիրուսի մակերեսային հակածնի (HBsAg) հայտնաբերման համար՝ արագ թեստավորման մեթոդով: Թեստի տեսակը՝ կասետային (Cassette): Հետազոտության համար անհրաժեշտ ժամանակը՝ առավելագույնը 20 րոպե: Անալիտիկ զգայունությունը՝ նվազագույնը 1 նգ/մլ: Զգայունությունը՝ 100%: Սպեցիֆիկությունը՝ 100%: 2x25 թեսթ գործարանային փաթեթավորումով	HEPATITIS B Ag TEST CARD	Lab-Care Diagnostics Ltd	Հնդկաստան

14.	**Ռևմոֆակտոր 100 թեսթ**	**հավաքածուն պարունակում է 100 թեսթ, ագլյուտինացիան ոչ ավել քան 2 րոպե, գործարանային փաթեթավորումով**	**RF REAGENT SET**	**Lab-Care Diagncstics Ltd**	**Հնդկաստան**
15.	Urin -10 մեզի անալիզի համար 100 թեսթ	հավաքածուն պարունակում է 100 թեսթ, մեզի անալիզի համար, գործարանային փաթեթավորումով	VioLine	DFI Co. Ltd	Հարավային Կորեա
16.	Պրոլակտին 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Пролактин	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
17.	Պրոգեստերոն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Стероид-Прогестерон	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
18.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-ПСАобщий	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
19.	Լյուտեինիզացնող հորմոն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Гонадотропин-ЛГ	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
20.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Гонадотропин-ФСГ	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
21.	Տեստոստերոն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Стероид-Тестостерон	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
22.	Թիրոքսին T4 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Тироид-Т4 общий	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
23.	Տրիյոդթիրոնին T3 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Тироид-Т3 общий	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
24	Թիեոտրոպ հորմոն 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Тироид-ТТГ	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
25.	Կորտիզոլ 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-Стероид-Кортизол	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն

26.	Հեպատիտ C Anti-HCV 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ИФА-анти-HCV	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
27.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ GQ CIC IgG 12x8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	CIC C1q ELISA	DiaMetra Srl	Իտալիա
28.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ C3D CIC IgG 12x8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	CIC C3d ELISA	DiaMetra Srl	Իտալիա
29.	ՎԻՉ-ինֆեկցիա HIV 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ВИЧ-УНИФ	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
30.	HBsAg ռեակտիվ 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-HBsAg	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
31.	Տոքսոպլազմա IgM 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ТОКСО-М	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
32.	Տոքսոպլազմա IgG 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ТОКСО-G	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
33.	Հերպես IgM 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ВПГ-1,2-М	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
34.	Հերպես IgG 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ВПГ-2-G	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
35.	Ցիտոմեգալովիրուս IgM 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ЦМВ-М	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
36.	Ցիտոմեգալովիրուս IgG 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ЦМВ-G	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
37.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ВЭБ-VCA-М	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն

38.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ВЭБ-VCA-G	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
39.	Խլամիդիա IgA 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ХЛАМИДИЯ TR-A	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
40.	Խլամիդիա IgG 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ДС-ИФА-АНТИ-ХЛАМИДИЯ TR-G	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն
41.	Սիֆիլիս 12X8	հավաքածուն պարունակում է 12x8 քանակությամբ տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, գործարանային փաթեթավորումով	ИФА-АНТИ-ЛЮИС	ООО «НПО «Диагностические системы»	Ռուսաստանի Դաշնություն

Ապրանքները պետք է ունենան

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ:

2.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: (ներկայացվում է մատակարարման ժամանակ):

3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Այն չափաբաժինները, որոնց չափման միավորը սահմանված է «փուլ» կամ «հավաքածու» և նշված չէ քանակական պարունակությունը հասկանալ N1

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԱՀ 0206259

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին/ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումն ըստ 2018թ. հետևյալ եռամսյակների	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ Ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	Ընդհանուր սպիտակուց 4x100մլ	հավաքածու	20	4,320	86,400	10	10
2.	Միզանյութ 2X120 մլ	հավաքածու	35	5,688	199,080	15	20
3.	Միզաթթու 2x100 մլ	հավաքածու	15	8,760	131,400	10	5
4.	Կրեատինին 2X120 մլ	հավաքածու	30	4,560	136,800	10	20
5.	Տրանսամինազա AUS 2X60 մլ	հավաքածու	30	4,560	136,800	10	20
6.	Տրանսամինազա ALS 2X60 մլ	հավաքածու	30	4,560	136,800	10	20
7.	Հիմնային ֆոսֆատազա 2X60 մլ	հավաքածու	15	5,640	84,600	5	10
8.	Լակտատ դեհիդրոգենազա 2x60մլ	հավաքածու	15	4,848	72,720	5	10
9.	Կրեատին ֆոսֆոկինազա 2X60 մլ	հավաքածու	12	23,760	285,120	6	6
10.	ֆոսֆոր 2X100 մլ	հավաքածու	10	6,720	67,200	5	5
11.	Սիֆիլիս RPR 100 թեսթ	հավաքածու	80	6,600	528,000	50	30
12.	Սիֆիլիս TPHA 100թեսթ	հավաքածու	20	17,460	349,200	10	10
13.	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու հեպատիտ B-ի հայտնաբերման համար	հավաքածու	120	6,480	777,600	70	50
14.	Ռևմոֆակտոր 100 թեսթ	հավաքածու	60	5,796	347,760	20	40
15.	Urin -10 մեզի անալիզի համար 100 թեսթ	հավաքածու	200	5,100	1,020,000	100	100
16.	Պրոլակտին 12X8	հավաքածու	10	29,280	292,800	5	5
17.	Պրոգեստերոն 12X8	հավաքածու	8	29,280	234,240	4	4
18.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12X8	հավաքածու	10	28,200	282,000	5	5
19.	Լյուտեինիզացնող հորմոն 12X8	հավաքածու	8	27,240	217,920	4	4
20.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12X8	հավաքածու	10	27,240	272,400	5	5
21.	Տեստոստերոն 12X8	հավաքածու	10	33,000	330,000	5	5
22.	Թիրոքսին T4 12X8	հավաքածու	25	23,280	582,000	10	15
23.	Տրիյոդթիրոնին T3 12X8	հավաքածու	25	23,280	582,000	10	15
24	Թիեոտրոպ հորմոն 12X8	հավաքածու	35	22,320	781,200	20	15
25.	Կորտիզոլ 12X8	հավաքածու	9	39,000	351,000	4	5
26.	Հեպատիտ C Anti-HCV 12X8	հավաքածու	28	21,000	588,000	18	10
27.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ GQ CIC IgG 12x8	հավաքածու	2	128,760	257,520	2	
28.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ C3D CIC IgG 12x8	հավաքածու	3	128,760	386,280	3	
29.	ՎԻՉ-ինֆեկցիա HIV 12X8	հավաքածու	25	22,440	561,000	15	10
30.	HBsAg ռեակտիվ 12X8	հավաքածու	12	18,600	223,200	12	

31.	Տոքսոպլազմա IgM 12X8	հավաքածու	12	23,400	280,800	6	6
32.	Տոքսոպլազմա IgG 12X8	հավաքածու	12	22,200	266,400	6	6
33.	Հերպես IgM 12X8	հավաքածու	20	23,400	468,000	10	10
34.	Հերպես IgG 12X8	հավաքածու	12	22,200	266,400	6	6
35.	Ցիտոմեգալովիրուս IgM 12X8	հավաքածու	12	23,400	280,800	6	6
36.	Ցիտոմեգալովիրուս IgG 12X8	հավաքածու	12	22,200	266,400	6	6
37.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8	հավաքածու	20	33,000	660,000	10	10
38.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8	հավաքածու	12	33,000	396,000	6	6
39.	Խլամիդիա IgA 12X8	հավաքածու	12	32,640	391,680	6	6
40.	Խլամիդիա IgG 12X8	հավաքածու	12	32,640	391,680	6	6
41.	Սիֆիլիս 12X8	հավաքածու	12	32,160	385,920	6	6
Ընդամենը՝					**14,355,120**		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
տնօրեն

/**Ա. ՄԵՂԼԵՄՅԱՆ,**

Հ. Ա. Մեղլեմյան

ԱԻ 0206259

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/26-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գին /դրամ/	Ըստ 2018թ ամիսների՝ աճողական					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.-ը
1.	Ընդհանուր սպիտակուց 4x100մլ	33691162/2/10/4	86,400	43,200	43,200	43,200	86,400	86,400	86,400
2.	Միզանյութ 2X120 մլ	33691162/4/10/4	199,080	85,320	85,320	85,320	199,080	199,080	199,080
3.	Միզաթթու 2x100 մլ	33691162/5/10/4	131,400	87,600	87,600	87,600	131,400	131,400	131,400
4.	Կրեատինին 2X120 մլ	33691162/6/10/4	136,800	45,600	45,600	45,600	136,800	136,800	136,800
5.	Տրանսամինազա AUS 2X60 մլ	33691162/7/10/4	136,800	45,600	45,600	45,600	136,800	136,800	136,800
6.	Տրանսամինազա ALS 2X60 մլ	33691162/8/10/4	136,800	45,600	45,600	45,600	136,800	136,800	136,800
7.	Հիմնային ֆոսֆատազա 2X60 մլ	33691162/10/10/4	84,600	28,200	28,200	28,200	84,600	84,600	84,600
8.	Լակտատ դեհիդրոգենազա 2x60մլ	33691162/16/10/4	72,720	24,240	24,240	24,240	72,720	72,720	72,720
9.	Կրեատին ֆոսֆոկինազա 2X60 մլ	33691162/17/10/4	285,120	142,560	142,560	142,560	285,120	285,120	285,120
10.	Ֆոսֆոր 2X100 մլ	33691162/19/10/4	67,200	33,600	33,600	33,600	67,200	67,200	67,200
11.	Սիֆիլիս RPR 100 թեսթ	33691162/23/10/4	528,000	330,000	330,000	330,000	528,000	528,000	528,000
12.	Սիֆիլիս TPHA 100թեսթ	33691162/24/10/4	349,200	174,600	174,600	174,600	349,200	349,200	349,200
13.	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու հեպատիտ B-ի հայտնաբերման համար	33691162/25/10/4	777,600	453,600	453,600	453,600	777,600	777,600	777,600
14.	Ռևմոֆակտոր 100 թեսթ	33691162/26/10/4	347,760	115,920	115,920	115,920	347,760	347,760	347,760
15.	Urin -10 մեզի անալիզի համար 100 թեսթ	33691162/28/10/4	1,020,000	510,000	510,000	510,000	1,020,000	1,020,000	1,020,000
16.	Պրոլակտին 12X8	33691162/29/10/4	292,800	146,400	146,400	146,400	292,800	292,800	292,800
17.	Պրոգեստերոն 12X8	33691162/30/10/4	234,240	117,120	117,120	117,120	234,240	234,240	234,240
18.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12X8	33691162/31/10/4	282,000	141,000	141,000	141,000	282,000	282,000	282,000
19.	Լյուտեինիզացնող հորմոն 12X8	33691162/32/10/4	217,920	108,960	108,960	108,960	217,920	217,920	217,920
20.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12X8	33691162/33/10/4	272,400	136,200	136,200	136,200	272,400	272,400	272,400
21.	Տեստոստերոն 12X8	33691162/34/10/4	330,000	165,000	165,000	165,000	330,000	330,000	330,000
22.	Թիրոքսին T4 12X8	33691162/36/10/4	582,000	232,800	232,800	232,800	582,000	582,000	582,000
23.	Տրիյոդթիրոնին T3 12X8	33691162/37/10/4	582,000	232,800	232,800	232,800	582,000	582,000	582,000
24	Թիեոտրոպ հորմոն 12X8	33691162/38/10/4	781,200	446,400	446,400	446,400	781,200	781,200	781,200
25.	Կորտիզոլ 12X8	33691162/39/10/4	351,000	156,000	156,000	156,000	351,000	351,000	351,000
26.	Հեպատիտ C Anti-HCV 12X8	33691162/40/10/4	588,000	378,000	378,000	378,000	588,000	588,000	588,000
27.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ GQ CIC IgG 12x8	33691162/43/10/4	257,520	257,520	257,520	257,520	257,520	257,520	257,520
28.	Շրջանառվող իմունոկոմպլեկսներ C3D CIC IgG 12x8	33691162/44/10/4	386,280	386,280	386,280	386,280	386,280	386,280	386,280
29.	ՎԻՉ-ինֆեկցիա HIV 12X8	33691162/45/10/4	561,000	336,600	336,600	336,600	561,000	561,000	561,000
30.	HBsAg ռեակտիվ 12X8	33691162/46/10/4	223,200	223,200	223,200	223,200	223,200	223,200	223,200

31.	Տոքսոպլազմա IgM 12X8	33691162/47/10/4	280,800	140,400	140,400	140,400	280,800	280,800	280,800
32.	Տոքսոպլազմա IgG 12X8	33691162/48/10/4	266,400	133,200	133,200	133,200	266,400	266,400	266,400
33.	Հերպես IgM 12X8	33691162/49/10/4	468,000	234,000	234,000	234,000	468,000	468,000	468,000
34.	Հերպես IgG 12X8	33691162/50/10/4	266,400	133,200	133,200	133,200	266,400	266,400	266,400
35.	Ցիտոմեգալովիրուս IgM 12X8	33691162/51/10/4	280,800	140,400	140,400	140,400	280,800	280,800	280,800
36.	Ցիտոմեգալովիրուս IgG 12X8	33691162/52/10/4	266,400	133,200	133,200	133,200	266,400	266,400	266,400
37.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8	33691162/53/10/4	660,000	330,000	330,000	330,000	660,000	660,000	660,000
38.	Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8	33691162/54/10/4	396,000	198,000	198,000	198,000	396,000	396,000	396,000
39.	Խլամիդիա IgA 12X8	33691162/55/10/4	391,680	195,840	195,840	195,840	391,680	391,680	391,680
40.	Խլամիդիա IgG 12X8	33691162/56/10/4	391,680	195,840	195,840	195,840	391,680	391,680	391,680
41.	Սիֆիլիս 12X8	33691162/57/10/4	385,920	192,960	192,960	192,960	385,920	385,920	385,920
Ընդամենը՝			**14,355,120**	**7,656,960**	**7,656,960**	**7,656,960**	**14,355,120**	**14,355,120**	**14,355,120**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/26-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրտս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/26-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն